

Ա. Կ. ՖԱՐՄԱՆՅԱՆ

ԿՆՈՑ ԴԵՐԸ ՀԱՅ ԲԺՇԿՈՒԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Զօրագրանց հետաքրքրական հարց է, թե ինչ դեր են խաղացել հայ կանայք Հայաստանում բժշկականությունից պատմություն մեջ հետագոր անցյալում: Մեր ձեռքի տակ հղած նյութը, թեպետև փոքր, բայց և այնպես հնարավորություն է տալիս հզորակացնելու, որ հայ կանայք մեկուսացած չեն եղել հասարակական կյանքից, մասնավորապես, նրանք որոշ հետաքրքրություն են ցուցաբերել բժշկական արվեստի գործնական կիրառման ընդարձակում և նույնիսկ բժշկական տեսական ընդլայնի հարցերում: Այս առավելապես կարևոր է այն տեսակետից, որ Արևելքի երկրներում կնոջ իրավական վիճակը հստակ խիստ սահմանափակ է եղել: Ուստի, հասկանալի է, որ այնպիսի մի մասնահատուկ գործում, ինչպիսին բժշկականությունն է, կինը չէր կարող առանձնապես մեծ դեր խաղացած լինել:

Քննարկվող հարցի կապակցությունը մեզ հասած հնագույն տեղեկությունները՝ ըստ վարջաբանության ավանդության՝ վերաբերում են հայ ֆեոդալ Սուրեն Սալահուդին կնոջը՝ իշխանուհի Ազիլիթային՝ 270—290 թվականներին, Արևելքում կոչված աղբյուրի մոտ (որն ըստ Վ. Թորգոմյանի՝ նշանակում է «արևի վանաններ») Ազիլիթան բաց է անում պատասխարան-բորոտանոց 35 հիվանդի համար. եթե հավատարու լինենք այդ վկայարանական աղբյուրին, բորոտանոցը բացվել է 300 տարի

¹ Այդ վկայարանական լեզենդի հնագույն թարգմանությունը մեզ հայտնի չէ: Մեր տեղեկությունները քաղում ենք հետևյալ հեղինակների աշխատություններից.

1. Ղ. Ալիշան, Հուշիկը հայրենյաց Հայոց, Ղ. Ա., էջ 216—238:

2. Ղ. Ալիշան, Արշալույս քերտոնեություն հայոց, Վինետիկ, 1920, Լրիկորդ առ., էջ 91—94:

3. Torkomian V. La première léproserie en Arménie. VIII congrès Internat. d'histoire de la med., Rome, 1930.

առաջ, քան առաջին բորոտանոցները, և 120 տարի առաջ, քան ընդհանրապես առաջին բուժական հիմնարկները Եվրոպայում:

Այս բորոտանոցի բացման պատմութունը հետևյալն է: Իշխանուհի Աղվիթան (ըստ Ղ. Ալիշանի՝ երևի, ազգությամբ հույն) ունենում է Թեոդորոս (Աթենոգորոս) անունով մի որդի, որը 15 տարեկան հասակում հիվանդանում է բորախտով: Յոթ տարի շարունակ աշխատում են նրան բուժել այդ հիվանդութունից, սակայն բոլոր փորձերն անցնում են ապարդյուն: Այն ժամանակ Դասիոս անունով մի քահանայի խորհրդով Աղվիթան իր որդուն տանում է Արբենուտ աղբյուրի կողքին գտնվող մի հովիտ, իրենց կալվածներից ոչ հեռու, որտեղ պատանին որոշ ժամանակից հետո ապաքինվում է: Այդ վայրում հավաքվել էին բազմաթիվ սովահարներ, մուրացկաններ և բորախտով հիվանդներ, որոնց ամբոխը քշում է քարերով, և որոնք այստեղ ապաստան էին որոնում ժայռերի ու լեռների ստվերում: Աղվիթան խորապես ցնցվում է այդ ախուր բանից և առաջարկում է իր ամուսնուն՝ աղբյուրի մոտ, ուր ապաքինվել էր նրանց որդին, հատուկ ապաստարան-բորոտանոց կառուցել բորախտով տառապող հիվանդների համար: Սուրեն Սալահուդին կատարում է իր կնոջ ցանկութունը, անմիջապես կառուցում մի ապաստարան, ուր տեղավորվում են բորախտով տառապող 35 հիվանդ: Հիվանդների համար առատորեն միջոցներ է տրամադրում ինքը Աղվիթան, հոգում է նրանց մասին, իր ձեռքն է վերցնում նրանց խնամելու գործը: Ցավոք, տեղեկութուններ չեն հասել այն մասին, թե ինչպիսի բուժում էին ստանում հիվանդները Արբենուտում: Թորգոմյանը կարծում է, որ այստեղ, արևի ու ջրի առատության պայմաններում, կիրառվում է արևաբուժություն և ջրաբուժություն:

Մեզ անհայտ է մնում նաև այդ բորոտանոցի հետագա վիճակը:

Ժամանակագրական կարգով հետևյալ տեղեկութունը, որ մենք ունենք քննարկվող հարցի վերաբերյալ, հաղորդել է Ց. Բրդարի ականավոր պատմագիր Ղևոնդ վարդապետը: 7-րդ դարի վերջին արաբական արշավանքների շրջանում, արաբներին հասած մի ձախորդության ժամանակ, Սմբատ Բաղրատունին՝ իր գործերով սրարդավ հետապնդելով արաբական զորքերին, ցանկանում է օրի քաշել նրանց բոլորին: Բայց իշխանուհի Շուշանը՝ դուրս գալով նրան ընդառաջ՝ խնդրում է Սմբատին խնայել թշնամու հիվանդ ու վիրավոր ռազմիկների կյանքը: Սմբատը

կատարում է նրա խնդրանքը: Ապա Շուշանն իր վրա է վերցնում արաբական վիրավոր ուղղակիներին խնամելու և բուժելու հոգսը: Նրանց վերքերը կապում են և բուժում: Նա հազցնում է վիրավորներին և, տալով նրանց իր նախիրներից ու հոտերից որոշ քանակությամբ անասուններ, ուղարկում է արաբ ամիրապետ՝ Արդել-Մելիքի մոտ, որից այդ ամենի փոխարեն շնորհակալությույն, նվերներ ու պատիվներ է ստանում:

Որ հնում կանայք կարող էին այս կամ այն ձևով դրազվել բժշկական պրակտիկ գործով, այդ մասին վկայում է նաև այն փաստը, որ հազորդել է մեզ հայ պատմագիր Ստեփանոս Օրբելյանը (վախճ. 1305 թ.): Փաստը վերաբերում է Սահակդուխտ կույսին, 8-րդ դարի շատ խոշոր գիտնական Ստեփանոս Սյունեցու բրոջը, այն Սյունեցուն, որը հունարենից հայերենի է թարգմանել փիլիսոփա ու բժիշկ Նեմեսիոսի «Յազգս բնութեան մարդոյ» խորագրերը կրող հայտնի աշխատությունը: Սահակդուխտը, պատմագիր Ստեփանոս Օրբելյանի ասելով, շատ լավ տիրապետում էր երաժշտական արվեստին և նույնը սովորեցնում նաև ուրիշներին: Ի միջի այլոց, նա շատ հիվանդներ է բուժել՝ օգտագործելով կրած շտուկները՝ որպես բուժիչ միջոց: Իբրև այդպիսին, երաժշտության կիրառումը Հայաստանում հայտնի էր Սահակդուխտից շատ ավելի առաջ. առհասարակ բուժման այդ մեթոդը գալիս է հին ժամանակներից: Հայ բժշկության կլասիկներ՝ Մխիթար Հերացին և Ամիրդովլաթը ևս հանձնարարում էին երաժշտությունը կիրառել՝ հոգեպես ճնշված հիվանդներին բուժելիս:

Ավելի ուշ, 10-րդ դարում, հայտնի է, որ Աշոտ Ողորմածի կին՝ Սոսրովանուշը Հայաստանում բաղձաթիվ հիվանդանոցներ ու պառասպարաններ է բաց արել տկարների համար: Յավոք, քիչ թե շատ մանրամասն տեղեկություններ չեն պահպանվել այդ հիմնարկների մասին:

Ռուբինյան դարաշրջանում, 13—14-րդ դարերում, երբ Կիլիկյան Հայաստանում բժշկությունը որոշ զարգացման էր հասել, Հայաստանի իշխանները բաց են անում հիվանդանոցներ ու բորոտանոցներ և լայնորեն իրենց հովանավորությամբ տակ են առնում աղքատներին ու տկարներին: Այդ դարաշրջանում բացված բոլոր բուժական հիմնարկներից մենք շատ կոնկրետ

¹ Բացի Սո. Օրբելյանից, տես նաև Դ. Ալիշան, Նուշեկի հայրենյայց Հայոց, հատ. Ա., «Ստեփանոս Սյունեցի և Սահակդուխտ», էջ 270—292:

վկայութիւն ունենք մի հիվանդանոցի մասին, որ բացել էր Լևոն Զ-րդի ղուստրը, Հեթում թագավորի կին՝ Զարել թագուհին: Ալիշանը, մի ձեռագրի տվյալների հիման վրա, պատմում է, որ Զարել թագուհին Սիս քաղաքում կառուցեց մի հիվանդանոց վաննասներով ու ջրմուղային կառուցվածքներով: Հիվանդանոցի մուտքի մոտ արտաքին կողմից կար հետևյալ մակագրութիւնը: «Կատարեցաւ յարժարումս հիւանդանոցին հրամանաւ մեծաւ փառաւք քրիստոսասէր թագուհւոյն Զապելի, ի թուականութեանս Հայոց ՈՂ ամին»:

Զարել թագուհին մեծապես հոգացել է հիվանդանոցի մասին. նա այցելում էր նրանց, ծառայութիւն մատուցում ու խնամում: Երբ նա չէր կարողանում անձամբ այցելել հիվանդներին, ապա, նրանց անխնամ չթողնելու համար, իր փոխարեն ուղարկում էր ուրիշներին: Զարելը խնամում էր ոչ միայն իր հիվանդանոցի հիվանդներին և ապաստարանի կարոտյալներին, այլև հաճախում էր քաղաքի մյուս հիվանդանոցները: Հիվանդները նրանից ստանում էին բոլոր անհրաժեշտ միջոցները: Արարահան հոշակավոր բժիշկ և պատմագիր Աբուլֆարաջի ասելով՝ Զարելի զթասրաութիւնը, բարութիւնը և բարեպաշտութիւնը ինչպես հայերի, այնպես էլ օտարների համար գովասանքի նյութ էին դարձել: Այսպես, նույն Աբուլֆարաջն իր «Համաշխարհային պատմութեան» մեջ հետևյալ կերպ է արտահայտվում նրա մասին. «Հավատարիմ Ռեբիա (Զարել) թագուհու՝ ավագ Լևոն թագավորի դստեր, Կոստանդնի որդի Հեթում թագավորի կնոջ և Կրիկիայի կրտսեր Լևոնի մօր՝ պատրաստակամութիւնը, բարեսրբութիւնը և հեղութիւնը դժվար է սպասել կերպով գովերպել»:

Ալիշանի ենթադրութեամբ Զարելի բացած հիվանդանոցն իր գոյութիւնը պահպանել է մինչև 1875 թվականը, այսինքն՝ մինչև Կրիկյան թագավորութեան անկումը, վերջնականապես կործանվել է 1642 թ. հուլիսին տեղի ունեցած մի ուժեղ երկրաշարժի հետևանքով: Նախկին հիվանդանոցի տեղում ներկայումս կան ջրմուղային կառուցվածքների հետքեր և աննշան ավերակներ:

Ստից դեպի արևելք՝ 1833 թվականին գտնվել է սրբատաշ քարի մի սալ հետևյալ մակագրութեամբ. «Կատարեցաւ յարժարումս շինուածոյ հիւանդանոցին քրիստոսասէր թագուհւոյ Զապելի և թուին Հայոց ՈՂ»: Թուրքերը ոչնչացրել են այդ սալը,

հենց որ իմացել են այդ հուշարձանի պատմական ծաղման մասին: Որ իրոք հիվանդանոցի մուտքի մոտ քարի սալի վրա եղել է այդպիսի բովանդակությամբ արձանագրություն, դրա հաստատունն գտնուեմ ենք Մատենադարանի մի ձեռագրում (№ 979—473), ուր հաղորդվում է Սսի նախկին հիվանդանոցի ավերակներն այցելած ականատես մեկի նկարագրությունը: Նա ընդօրինակել է քարի սալի վրայի արձանագրությունը, որ ամենայն ճշտությամբ համընկնում է Ալիշանի հաղորդմանը: Քանի որ այդ հիվանդանոցը եղել է ամբողջի ներսում, ապա կարելի է ենթադրել, որ դա զինվորականները հիվանդանոց է եղել:

Զարեհից հետո հայկական մայրաքաղաքի հիվանդանոցի սպասարկման աշխատանքն իր վրա է վերցնում արքայադուստր Ֆիմին, որը նույն հաջողությամբ շարունակում է իր նախորդի գործունեությունը:

Ավելի ուշ ժամանակներում, իր մասին լավ համբավ է թողել մի ոմն գոյակ, կադ Աննան, Քերեմեթ գյուղից, որ ապրել է 17-րդ դարի վերջերին և 18-րդ դարի սկզբներին: Թորոմյանը նրա մասին գրում է հետևյալը. «Քանիցս առիթ ունեցած եմ ծանօթանալու հայ թագուհիներ ու իշխանուհիներ, որոնք իրենց հիւանդանոցում զործերով և դարմանատու բարեբարութիւններով արժանի էին հայ բժշկական պատմութեան մէջ նշանակելու»:

«Առոնց կարգը կը դասեմ այսօր հայ կին մը ևս, ոչ սակայն թագուհի կամ իշխանուհի, այլ աննշան կին մը, համեստ ու պարզ, որ հեռաւոր վայրի մէջ յոյժ օգտակարութիւն ունեցած է երբեմն նուիրուելով տառապող մարդկութեան ցաւերը ամոքելու նուիրական պաշտօնին և թողած է լաւ բժիշկի համբաւ»:

«Աննա անուն գոյեակ մ'էր այն, բնակչուհի Նիկոմետիո վիճակին պատկանող Քէրէմէթ գիւղին, ուր տարիներով հիւանդներ կը դարմանէ, ամէն ազգէ անխտիր, շնորհիւ կարգ մը դեղերուն զորս թվ գիտէ, մըրկէ, և ինչպէս սովորած էր»:

Թորոմյանը քննադրում է, որ նա բժշկական արվեստի վերաբերյալ ունեցած գիտելիքները ժառանգաբար ստացել է իր նախնիներից:

Տեր-Հակոբ քահանան, Քերեմեթ գյուղից, բժշկական բնագավառին վերաբերող մի շարք տեղեկություններ է հավաքել այդ գոյակ Աննայից և հաղորդել է մի ձեռագրում, որ պահվում է Վենետիկի Միսիթարյան միաբանության գրադարանում: Այդ

ձեռագրի մասին տեղեկութիւններ հաղորդել է բժիշկ Թորգոմյանը: Ըստ էութեան այդ երկը ավելի շուտ պատկանում է դայակ Աննային, քան այդ աշխատութիւնն արտագրողին: Հետաքրքրական է, որ մեզ է հասել նաև մի ուրիշ ձեռագիր ասողջագահական բովանդակութեամբ, որ նույնպէս պատկանում է Բերեմեթ գյուղացի Տեր-Հակոբ քահանային և կրում է հետևյալ վերնագիրը. «Օգտակար խորհուրդներ մեծ Գալէսոսի, որին արաբերէն լեզվով կոչում են բժիշկ Լոխման և որը ինքը է իմաստուն Գալէնը»:

Սույն ձեռագրի մասին տեղեկութիւններ ժողովել է Հայաստանի Գիտ. Ակադեմիայի իսկական անդամ Լ. Հովհաննիսյանը: Այդ ձեռագիրը, նույն Աննա դայակի խնդրով, գրել է վերը հիշված Տեր-Հակոբ քահանայն: Աննան վախճանվել է 18-րդ դարի սկզբին:

Այնուհետև անհետաքրքրական չի լինի հիշել, որ «Տիկին Փուկեթ» (Բուկետ) անվանված մի կնոջ հովանավորութեամբ գրվել է 168 էջանոց մի գիրք, որ պահվում է Վենետիկյան Մխիթարյան միաբանութեան գրադարանում: Այդ ձեռագիրը, ըստ երևույթին, 17-րդ դարի գործ է:

«Փուկեթ» տիկինը բժիշկ չի եղել, նա չի եղել նաև այդ գրքի հեղինակը, համենայն դեպս գրքում այդ մասին որևէ ցուցում չկա: Ըստ երևույթին՝ նա եղել է այդ գրքի համար նյութեր հավաքող միայն, թերևս գրքի խմբագիրը: Այդ ձեռագրի անվանաթերթի վրա գրված է հետևյալը. «Դեղորայք գթութեան պատրաստեալք ի տիկնոջէ Փուկեթ կոչեցելոյ, վասն բժշկելոյ սակաւ ծախիւք զամենայն ախտս մինչև այսօր անբժշկելիք համարեալ»:

Այս տողերից պարզ երևում է, որ «Տիկին Փուկեթ» ինքը քաջ ծանոթ է եղել դեղորայք պատրաստելու եղանակներին:

Թորգոմյանի տվյալներով գրքի նյութերը վերցված են եվրոպական բժշկութիւնից: Գլխավորապէս Ֆրանսիական և իտալական դեղագործութիւնից: «Տիկին Փուկեթը» հետապնդել է դեղորայքն էֆանացնելու նպատակ և զբա համար այդ գրքում նա տվել է միայն այնպիսի դեղերի նկարագրութիւնը, որոնց պատրաստման համար մեծ ծախք չի պահանջվում: Այդ երկը, ինչպէս ասված է այնտեղ, հանդիսանում է գրքի միայն առաջին մասը, իսկ երկրորդ մասը այդ ձեռագրում իսպառ բացակայում է: Ըստ երևույթին երկրորդ մասը կորել է, համենայն դեպս

դրա մասին որևէ տեղեկություն չի պահպանվել: Գիւլքը պարունակում է արտաքին հիվանդությունների, ամենից ավելի վերքերի, նկարագրություններ: Ձեռագրի տեքստերը, թեկուզ հատվածաբար, մինչև այժմ ոչ մի տեղ չեն հրատարակված:

Այն ամենից, ինչ ասվեց վերևում, կարելի է եզրակացնել, որ կնոջ իրավական վիճակը չէր խանգարում նրանց մասնակցել երկրի կուլտուրական կյանքին: Ճիշտ է, հայկական դատաստանագիրքը մեզ բավականաչափ ապացույցներ է տալիս հօգուտ այն ժամի, որ կնոջ իրավունքները նախկին ժամանակներում շատ անգամ բավականաչափ սեղմված են եղել և որ կինը իր վիճակով, ըստ ամենայնի, ցած է կանգնած եղել տղամարդուց. բայց և այնպես նկատելի է, որ մինչև մահմեդական ժողովուրդների տիրապետությունը՝ հայ կանանց իրավունքների սահմանափակումը առանձնապես նկատելի չի եղել: Մենք տեսնում ենք, որ սոցիալական տեսակետից սարքեր խավերի պատկանող կանայք կարող էին ախտիվ մասնակցություն ունենալ բժշկական արվեստը զարգացնելու, տարածելու, հիվանդներին բժշկական օգնություն ցույց տալու վերաբերյալ գործնական միջոցառումներ մշակելու, ինչպես նաև բժշկական երկեր գրելու, հովանավորել՝ մեկենասի դերում հանդես գալու և այլ նման գործերում:

Կնոջ իրավական և սոցիալական դրությունը Հայաստանի պատմական անցյալում ցարդ ուսումնասիրության չի արժանացել: Տարակույս չկա, որ մեր բազմահարուստ կուլտուրական ժառանգության մեջ ղեռն կան բազմաթիվ վիպություններ ու փաստական տվյալներ կնոջ քաղաքական և կուլտուրական-տնտեսական սխրագործությունների ու ավանդների մասին: Այդ նյութերի հավաքումն ու մանրակրկիտ ուսումնասիրությունը քաց կանի մի վերին աստիճանի հետաքրքրական ու պայծառ էջ հայ կուլտուրայի պատմության մեջ:

A. K. ФАРМАНЫН

О РОЛИ ЖЕНЩИНЫ В ИСТОРИИ АРМЯНСКОЙ МЕДИЦИНЫ

Правовое положение армянских женщин, как и вообще женщины в странах Востока, в историческом прошлом было довольно ущемленным. Тем не менее сохранившиеся некоторые исторические данные свидетельствуют о том, что армянки во многих случаях принимали все же довольно

живое участие в культурно-общественной жизни страны, в частности в области практической и даже теоретической медицины. Так, армянские женщины из высших кругов открывали лепрозории (княгиня Агвида—в 260—270 г. г. н. э.), больницы и приюты для немощных (царица Хосровануш в X в., царица Забел в 1241 г.). Нередко армянские женщины занимались также практическим врачеванием (девица Саакдхут и княгиня Шушан в VIII в.) или покровительствовали делу писания медицинских сочинений (повивальная бабка Анна в XVII в., «Госпожа Букет» в XVII в.).